19-ՐԴ ՆԻՍՏ

17 սեպտեմբերի, երեկոյան ժամը 7, 1918թ.

Նախագահ՝ *Ավ. Սահակյան*

Նախագահը բանալով նիստը՝ կարդում է օրակարգը.

Օրակարգն է.

1. Դիլիջանում բացվելիք գանձարանի օրինագիծը.
2. Օրինագիծ քրեական դատավարության մի քանի կետերի փոփոխության մասին.
3. Պատգամավորների օրապահիկի խնդիր.
4. Օրինագիծ օրենքների հրատարակության մասին.
5. Կառավարության պատասխանը ֆրակցիաների հարցումներին.
6. Ընթացիկ գործեր:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Ֆինանսական հանձնաժողովի կողմից զեկուցանում է Դիլիջանում բացվելիք գանձարանի մասին: Հանձնաժողովը ստացել է կառավարությունից Դիլիջանում բացվելիք գանձարանի օրինագիծը և քննելով գտել է, որ ծառայողների կազմը բավական լայն է մշակված, անհրաժեշտ է կրճատել:

Հ. Բուդաղյան - Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիայի կողմից հայտնում է հետևյալը: Դիլիջանի շրջանը կազմված է Ալեքսանդրապոլի և Ղազախի գավառներից և Ջալալ-Օղլիի շրջանից: Ելակետ ունենալով սույն հանգամանքը՝ ֆրակցիան կենտրոն է համարում ոչ թե Դիլիջանը, այլ Ղարաքիլիսեն, որտեղ պետք է բանալ գանձարանը: Պետք է ի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ձմեռվա ամիսներին Դիլիջան-Ելենովկա գիծը փակվում է, իսկ Ղարաքիլիսե-Քարվանսարա գիծը աշխատում է: Գանձարանը Ղարաքիլիսեում հիմնելով միայն կարող են անարգել զարգանալ այն բոլոր ֆինանսական օպերացիաները, որոնք ի նկատի ունենալով՝ կառավարությունը ներկայացրել է այդ օրինագիծը: Սակայն Ղարաքիլիսեն մեր ձեռքում չգտնվելու պատճառով՝ ժամանակավորապես գանձարանը պետք է բացվի Դիլիջանում:

Ա. Խոնդկարյան - Սոց.-հեղափ. ֆրակցիայի կողմից հայտարարում է, որ Դիլիջանում գանձարան բաց անելու անհրաժեշտության մասին ֆրակցիան առաջարկություն չունի: Գանձարանը Ղարաքիլիսե բաց անելու առաջարկը վաղաժամ է և Ղարաքիլիսեն հետ առնելու դեպքում էլ թեական՝ նկատի ունենալով նրա քայքայված տնտեսությունը տաճիկ կառավարության ձեռքով:

Իսկ ինչ վերաբերում է ֆինանսական նախարարի ներկայացրած օրինագծի մեջ հանձնաժողովի արած կրճատումներին՝ սոց.-հեղ. ֆրակցիան համաձայն է դրան:

Ս. Տեր-Մարտիրոսյան -Նկատի ունենալով, որ մեր բոլոր անելիքները ժամանակավոր են և կենտրոնն էլ, ավելի շուտ, Դիլիջանն է, [հանձնաժողովը] համաձայն է, որ գանձարանը առայժմս հիմնվի Դիլիջանում:

Հ. Ազատյան - Հայտնում է, որ սոց.-դեմ. ֆրակցիան ևս այն կարծիքին է, որ Ղարաքիլիսեն է կենտրոնը, բայց ի նկատի ունենալով ներկա պայմանները, առայժմս պետք է բանալ Դիլիջանում:

Բժ. Ղազարյան - Հայտնում է, որ դաշնակցական ֆրակցիան վայրի խնդրի վրա չի պնդում, քանի որ Ղարաքիլիսեն դեռ մեր ձեռքը չէ:

Ընդհանուր վիճաբանությունը սպառված հայտարարելով՝ նախագահը դնում է օրինագիծը քննության կետ առ կետ: Առաջին հոդվածը ընդունվում է միաձայն: Երկրորդ հոդվածը անցնում է 29 ձայնով:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Հանձնաժողովի կողմից առաջարկում է երրորդ հոդվածը հանել և փոխարինել հանձնաժողովի երկու հոդվածներով. ընդունվում է այս առաջարկը:

Ապա խորհուրդը անցնում է օրինագծի երրորդ ընթերցանության, հոդված առ հոդված և կետ առ կետ քվեարկությամբ ընդունում է:

Հետո կատարվում է ամբողջ օրինագծի քվեարկությունը ուղղումներով և հավելումներով և ընդունելով՝ հանձնվում է խմբագրական հանձնաժողովին:

Խորհուրդը անցնում է օրակարգի երկրորդ կետին:

Ս. Տիգրանյան, օրենսդրական հանձնաժողովի զեկուցաբեր - Արդարադատության նախարարի օրինագիծը օրենսդրական հանձնաժողովը քննեց նախարարի ներկայությամբ, և նախարարը համաձայնվեց փոխել մի քանի հոդվածները: Մյուս կետերը հանձնաժողովի անդամների մի մասն էր միայն պաշտպանում: Կառավարությունը քրեական դատավարության մի քանի օրենքների փոփոխությունը մտցրել է ոչ թե նրա համար, որ այդ օրենքները թերի են, այլ այն պատճառով, որ մեր երկրում գոյություն ունեն այնպիսի կապեր, որոնք խոչընդոտ են հանդիսանում օրենքի կատարյալ կիրառման:

Հ. Բուդաղյան - Առաջարկում է օրինագծի քննությունը սկսել 626-րդ հոդվածից՝ ընդունելով այն որպես կենտրոնական հոդված:

Ս. Տիգրանյան - Կարդում է 626-րդ հոդվածը՝ փոփոխված:

Դ. Զուբյան - Սոց.-հեղ. ֆրակցիայի կողմից հայտարարում է անընդունելի նախարարի արած այդ փոփոխությունը, որովհետև դա օրենքին գործնական տեսակետից ոչինչ չի ավելացնում, արդարադատության գիտակցությունն էլ չի բարձրանում:

Հ. Բուդաղյան - Ընդդեմ արտահայտվելով 626-րդ հոդվածի փոփոխության՝ ասում է, թե առաջարկված նոր կարգերը ոչ մի գրավական չեն տալիս արդարադատության: Առաջարկում է չընդունել 626-րդ հոդվածի փոփոխությունը, որովհետև դա կմեռցնի արդարադատությունը:

Գ. Ենգիբարյան - Դեմ է 626-րդ հոդվածի փոփոխության, որով ոչնչացվում է դատարանի կոլեգիալությունը և դատարանը դառնում է ոչ թե արդարադատություն փնտրող մի մարմին, այլ սոսկ գործիք: Ապա շեշտում է, որ չնայած դատարանը պետք է ազգայնացվի, բայց նախարարը մինչև այժմս էլ հայերեն չիմացողներին է նշանակել պաշտոններում:

Ա. Մալխասյան - Այս օրինագիծը մտցնելու միակ արդարացումը նախարարը գտնում է մեր երկրի առանձնահատուկ պայմանների մեջ, բայց այդ ի նկատի ունենալով, չպետք է քաջալերել ժողովրդի վատ ցանկությունները դատարանից խուսափելու՝ ի նկատի ունենալով, որ այդ փոփոխությունները առաջ պիտի բերեն ժողովրդի մեջ պետության և դատավարության հեղինակության անկում. չպետք է այդ հոդվածը փոփոխել:

Ս. Խաչատրյան - Մենք բոլորս էլ կանգնած ենք ձևական հողի վրա. գործնականը մեզ թելադրում է, որ այդպիսի փոփոխություն պետք է մտցնել օրենքի մեջ, որովհետև հակառակ դեպքում դատարանը կանգնում է, և դատավարությունները տեղի չեն ունենում: Առաջարկում եմ ընդունել օրինագիծը:

Արդարադատության նախարար - Պատասխանելով պատգ. Ենգիբարյանի վերջին հայտարարության, ասում է. Այն հույսը, որ ունեինք մեր երիտասարդության վրա՝ չարդարացավ, նրանք բոլորն էլ նախարար դառնալու ցանկություն ունեն և ոչ թե ժողովրդական գործիչներ: Ենգիբարյանը լինելով հեղափոխական տրիբունալի նախագահ, այժմ ինչու՞ է դեմ առաջարկված փոփոխություններին: Հեղափոխական տրիբունալը հետ մղեց պետական դատարանը, որովհետև երկրի պայմաններն այդպես էին թելադրում: Նույնպես և այժմ. ի սեր երկրի կառավարության և ի սեր գործի արագ ընթանալուն, նախարարությունը ձեռնարկել է այս փոփոխություններին:

Ս. Մալխասյան - Տեսականապես դատախազը պիտի պաշտպանի, սակայն գործնականում նա մեղադրողի դեր է ստանձնում, որպեսզի արդարադատությունը երևան հանի: Եթե ընդունենք այդ փոփոխությունները, ճիշտ է, դատավորները կարող են դատել, սակայն զրկում են հնարավորությունից պաշտպաններին պաշտպանելուց, որից շատ է կախված արդարության երևան գալը: Թե՛ Ս. Խաչատրյանը և թե՛ արդարադատության նախարարը չեն առաջնորդվում իրական փաստերով:

Գ. Ենգիբարյան - Պատասխանելով արդարադատության նախարարին, ասում է. Հեղափոխական տրիբունալը հնարել են այն ժամանակ, երբ կառավարություն չկար, իսկ այժմ կառավարություն ունենք և այդպիսի տրիբունալի կարիք չենք զգում, ուրեմն և նախարարի պատճառաբանությունը անտեղի է: Ինչ վերաբերում է դատարանի ազգայնացման դանդաղ ընթանալու առթիվ նախարարի տված բացատրության, հարց եմ տալիս. ինչու՞ են նշանակվել պատասխանատու պաշտոնների մեջ այնպիսի անձնավորություններ, որոնք ոչ միայն հայերեն չգիտեն, այլև կրթական ցենզ չունեն, ինչպես օրինակ՝ Յուսակով, Էլո և այլն:

Հ. Բուդաղյան - Նախարարը ոչինչ չասաց և այդ ցույց է տալիս, որ նա այս փոփոխությունը մտցրել է ոչ թե երկրի առաջադիմությունն ու կառավարության վարկը բարձրացնելու համար, այլ հենց այնպես:

Նախագահը հայտարարում է 15 րոպե ընդմիջում:

Ընդմիջումից հետո քվեարկության է դրվում 626 [-րդ] հոդվածը փոփոխված ձևով. թեր ձայն են տալիս երեք հոգի:

Ս. Տիգրանյան - Կարդում է 438-րդ հոդվածը և փոփոխությունը:

Հ. Բուդաղյան - Վկային երկրորդ անգամ հարկադրական ձևով բերելը անարդարացի է, անօրինական: [Մեր ֆրակցիան] դեմ է 438-րդ հոդվածի փոփոխության:

Ս. Խաչատրյան - Հին օրենքը պաշտպանում է անձի անձեռնմխելիությունը. օրենքի այս փոփոխությունը խախտում է անձի անձեռնմխելիությունը, որի դեմ բողոքում եմ:

Գ. Ենգիբարյան - Դեմ է արտահայտվում օրենքի փոփոխության: Բացի պատգ[ամավոր] Խաչատրյանի հիշատակած փաստից, վկայի ցուցմունքը հասարակական և սոցիալական պարտականություն է: Մեր ժողովրդի սոցիալական ինստինկտները այնքան էլ զարգացած չեն, ուստի օրենքի այդ փոփոխությունը ավելի կնպաստի դրան:

Արդարադատության նախարար - Պաշտպանում է օրենքի փոփոխությունը և ավելացնում, որ գործնական տեսակետից մոտենալով խնդրին՝ պետք է պատիժը նշանակել վկայի առաջին անգամ չգալուց հետո:

Քվեարկվում է 437 [-րդ] հոդվածի փոփոխությունը. ձայն են տալիս 18 հոգի դեմ և 9 թեր:

Ս. Տիգրանյան - Կարդում է 576 [-րդ] հոդվածը և փոփոխությունը:

Հ. Բուդաղյան և *Գ. Ենգիբարյան* - Դեմ են արտահայտվում և անընդունելի են համարում այս հոդվածի փոփոխությունը:

Արդարադատության նախարար -Պաշտպանում է:

Քվեարկություն. 10 թեր, 16 դեմ:

Ս. Տիգրանյան - Կարդում է 714, 713 [-րդ] հոդվածները և փոփոխությունը:

Դ. Զուբյան - Սոց.-հեղ. ֆրակցիայի կողմից հայտարարում է, որ փոփոխության կարիք զգացվում է ոչ թե 714 [-րդ] հոդվածի մեջ, այլ 711-րդի: Երկրորդ՝ բոլոր վկաները պետք է ըստ իրենց դավանանքի երդվեն, սակայն այն մարդիկ, որոնք համոզմունքով ոչ մի դավանանք չունեն, չեն ենթարկվում երդման:

Գ. Ենգիբարյան - Նոր փոփոխություններ մտցնելը թյուրիմացություն է, որովհետև ժամանակավոր կառավարությունը արդեն իսկ փոխել է այդ հոդվածները՝ վերացնելով կրոնական երդումը:

Դ. Զուբյան - Գ. Ենգիբարյանի ասածը ճիշտ է, սակայն Երևանում այդ փոփոխության մասին տեղեկություն չունեն: Առաջարկում է 714 [-րդ] հոդվածը դուրս ձգել և 711 [-րդ] հոդվածը փոփոխել: Առաջարկը քվեարկվում և ընդունվում է:

Ս. Տիգրանյան - Կարդում է 793-րդ հոդվածը, որ ընդունվում է միաձայնությամբ:

Ապա խորհուրդը անցնում է օրակարգի *երրորդ* հարցի քննության. կառավարության պատասխանները ֆրակցիաների հարցումներին: Կարդացվում են նախարարներին ուղղված հարցումները:

Վարչապետ Քաջազնունի - Հայտնում է, որ մինչև հիմա արտաքին գործ[ոց] նախարարության մեջ այնպիսի դեպքեր տեղի չեն ունեցել, որոնք զեկուցանվեն խորհրդարանում: Արտաքին հարաբերությունները ճիշտ այն դրության մեջ են, ինչ որ հայտնված է կառավարության հայտագրի մեջ: Մի քանի օրից հետո կներկայացվի արտաքին գործոց նախարարության նախահաշիվը, որի քննության ժամանակ պատգամավորները այս կամ այն խնդրի մասին կարտահայտվեն: Ինչ վերաբերվում է Խալիլ փաշայի հետ ունեցած բանակցություններին, պետք է ասել, որ բանակցությունները քաղաքական նկատումներով տեղի չեն ունեցել: Նրա Երևան ժամանելը զուտ քաղաքավարական ակտ էր:

Անցնելով Թիֆլիսում գտնվող հայկական զորամասերի լիկվիդացիայի խնդրին՝ վարչապետը նկատում է, որ լիկվիդացիան արագ չի կատարվում հետևյալ պատճառներով. նախ՝ մեր բոլոր գործերը արագ և կանոնավոր չեն ընթանում շնորհիվ պետական մեխանիզմի բացակայության. երկրորդ՝ զինվորական գործերի գործավարությունը բարդ է: Ինչ վերաբերում է 20.000 ռուբլի ծախսին, այդ սխալ է. ընդամենը Թիֆլիսում ունենք 350 զինվոր՝ օրական 5 ռ. 50 կ. ծախսելով յուրաքանչյուրի համար՝ ընդամենը ծախսվում է 2000-2500 ռ.: Լիկվիդացիայի են ենթարկվել մոտ 1250 սպաներ: Լիկվիդացիայի գործը դժվարանում է, որովհետև փաստաթղթեր չկան:

Արամ, ներքին գործոց նախարար - Երեք հարցում կա. ա) պարենավորման, բ) առևտրի ապահովության և գ) քոլերայի դեմ կռվող մարմնի թռուցիկները հայերեն չտպվելու մասին: Ամեն տեղ հեռագիրներ են տրված, որպեսզի ռուսական դրամի շահագործման դեպքեր չլինեն և շահագործողները պատասխանատվության ենթարկվեն: Լիազորների գործունեության մասին քննություն է կատարվում. արդյունքը կհաղորդվի խորհրդարանին:

Անցնելով երկրորդ հարցումին՝ նախարարը ասում է, թե՛ արտահանությունը և թե՛ ներմուծումը Դիլիջանի կողմից է, որի համար այնտեղ հիմնվել է մաքսատուն: Ինչ վերաբերվում է խուզարկություններին, դրանք փաստ են, որի առաջը հնարավորություն չկա առնելու: Հայերից մեկ ու կես ամսվա ընթացքում բողոքներ չեն եղել. ինչ որ իմացել եմ՝ եղել է կամ մամուլից կամ պատգամավորներից և կամ մասնավոր մարդկանցից: Թուրքերի կողմից միշտ էլ լինում են նման բողոքներ:

Վաղարշապատի և Օշականի դեպքերի համար պաշտոնական քննություն է կատարվել, սակայն միանգամայն հակառակ եզրակացություն է ստացվել: Քննիչի զեկուցման համաձայն այդ դեպքերը կուսակցական բնույթ են կրում:

Քոլերայի դեմ մաքառող հանձնաժողովի հայտարարությունները ռուսերեն են տպված, որովհետև թարգման և գրաշար չէ եղել. բացի այդ, շատ շտապողական է եղել:

Ֆինանսների նախարար - Առաջին հարցը ընդհանուր ձևով է և իր ծավալով շատ խոշոր: Թե ինչ վիճակի մեջ է մեր ֆինանսների գործը, այս հարցին չէի ուզի կցկտուր պատասխան տալ և կխնդրեի, որ թույլատրվի ինձ բացատրությունը թողնել պետական բյուջեն ներկայացնելու ժամանակ: Կա այդ հարցի մեջ և մասնակի խնդիր, այն, թե ինչքա՞ն է ծախսվել 80 միլիոն ռուբլուց և ի՞նչ կա այժմ: Այդ մասին ևս կխնդրեի թույլատրել բացատրելու ֆինանսների հանձնաժողովին: Նախարարությունը ձեռնարկել է ձևակերպելու հարկերի սիստեմ. հին հարկերի վերացման և նորի մուծման մասին կներկայացվի օրինագիծ: Մեր հարկերի հիմքը կազմում է եկամտային տուրքը, որ այժմ կիրառել անհարմար է, որովհետև եկամտային աղբյուրների քննությունը կատարված է 1910 թվին. հիմնվել այդ քննության վրա և նշանակել տուրքեր, շատ աննշան հասույթ կբերի: Բացի այդ, 1910 թվի տուրքերի չափերը այժմ ընդունելի չեն պատերազմի և այլ հասարակական պայմանների շնորհիվ: Բայց որովհետև սա է միակ միջոցը պետական

գանձարանի հարստացման, ուստի և նախարարությունը հարմար գտավ հարկերի գանձումը հետաձգել մինչև նոր քննություն և եկամտային տուրքերը հավաքել դրանից հետո: Այս քննությունը հանձնված է մեր հարկային տեսուչներին և ժամանակը նշանակված է մինչև նոյեմբերի 15-ը: Մեր հարկերի գանձումը նորմալ է և հույս կա, որ ապագայում ավելի կկանոնավորվի:

Զորական նախարար - Էջմիածնում կոմենդանտի միջոցով հավաքված դրամով, որի գումարն է 1.500 ռ., թաղված են գաղթականներ. մնացած գումարը կմտցվի գանձարան: Ոչ զինվորականների զինվորական հագուստ կրելու դեմ շուտով կլինի հրաման:

Դ. Զուբյան - Ինչու՞ Վաղարշապատում տուգանքները կոմենդանտն է հարկադրված հավաքելու և ինչու՞ կան գումարներ, որոնց համար ստացականներ չեն տրված:

Զորական նախարար - Կոմենդանտը իմ ժամանակ տուգանք չի նշանակել: Ինչ վերաբերվում է ստացականներին՝ ենթադրում եմ, որ անպայման պիտի տրվեն:

Ա. Մալխասյան - Անցյալ անգամ սոց.-դեմոկրատները հարցապնդում մտցրին Վաղարշապատի դեպքերի մասին, և խորհրդարանը հակառակ մեզ, անցկացրեց Հ. Հ. Դաշնակցության առաջարկությունը, որով պարտավորեցնում էր զինվորական նախարարին միջոցներ ձեռք առնել՝ անկարգությունների առաջն առնելու համար այնտեղ: Սակայն այդ ուղղությամբ նախարարի կողմից քայլեր չեն առնվել:

Հ. Սարգսյան - Տուգանքներ պիտի վերցնի ոչ թե կոմենդանտը, այլ կոմիսարը. կոմենդանտը ինքնագլուխ մտնում է տները, գռեհիկ է վարվում և զինվորների միջոցով նեղում է բնակիչներին:

Զորական նախարար - Հայտնում է, որ Վաղարշապատում, որպես պատերազմական շրջանում, կոմենդանտը իրավունք ունի տուգանքներ դնելու:

Նիստը փակվում է գիշերվա ժամը 2-ին:

«Զանգ», 28 սեպտեմբերի 1918թ.